ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՋՐՎԵԺԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

01.07.2014 -01.07.2015 թ.թ. ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հաշվետվությունը համայնքի բնակչությանը

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՋՐՎԵԺ - 2015 թ.

Հարգելի համագյուղացիներ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, համայնքի ղեկավարի համար սահմանված պարտադիր, կամավոր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում Ձեզ է ներկայացվում համայնքի ղեկավարի և աշխատակազմի կողմից իրականացված այն հիմնական գործառույթները, որոնք առաջնահերթությամբ և օրենքով սահմանված կարգով ենթակա են կատարման:

1. Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով, միջոցներ են ձեռնարկվում պաշտպանելու համայնքի բնակիչների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքներն ու օրինական շահերը, կազմակերպվում է համայնքի բնակիչների հաշվառումը:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 230 որոշում, արձակվել 18 կարգադրություն, ավագանու կողմից կայացվել է 63 որոշում:

Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովում քննարկվել է երկու դիմում, կայացվել է երկու որոշում դրական ելքով:

Սահմանված է քաղաքացիների ընդունելության օրեր, որոնք գրանցվել են համապատասխան մատյանում, քննության է առնվել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Հաշվետու ժամանակահատվածում բնակիչների՝ համայնքի ղեկավարին ուղղված դիմումների թիվը հասնում է 647-ի, որոնց տրվել է համապատասխան ընթացք: Դիմումներից 20-ը կոլեկտիվ կարգի են՝ կապված թաղամասի, փողոցների լուսավորման համակարգի կառուցման, ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման, համայնքի նոր թաղամասերի ջրամատակարարման, կեղտաջրերի հեռացման, կոյուղու համակարգի կառուցման և բազմաթիվ այլ հարցեր: Մի շարք հարցերի կապակցությամբ տեղի է ունեցել բնակչության հետ համատեղ քննարկում և առաջնահերթության կարգով հարցերը ստացել են իրենց լուծումը կամ գտնվում են լուծման փուլում:

2. Ֆինանսների բնագավառ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով, սահմանված կարգով կազմվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի բյուջեի նախագիծը, նրանում առաջարկվող փոփոխությունները, ինչպես նաև ապահովվել է բյուջեի կատարումը: Բյուջեի կատարման մասին եռամսյակային հաղորդումները, ինչպես նաև բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը սահմանված կարգով ներկայացվել է համայնքի ավագանուն:

Հաշվետու ժամանակահատվածում՝ 01.07.2014-01.07.2015 թվականներին բյուջեով նախատեսված բոլոր եկամտատեսակների հավաքագրումը իրականացվել է կազմված համամասնություններին համապատասխան: 2014 թվականին նախատեսված տարեկան 154,003.0 հազ.դրամի դիմաց փաստացի եկամուտները կազմել են 167,233.0 հազ.դրամ, որից՝ 89,547.4 հազ.դրամը հաշվետու ժամանակահատվածում: 2015 թվականին հաշվետու ժամանակահատվածում նախատեսված տարեկան 159,959.0 հազ.դրամ եկամուտներից հավաքագրվել է 76,808.6 հազ.դրամ: Նախորդ տարվա նույն

ժամանակահատվածում հավաքագրված փաստացի եկամուտները կազմել են 77,685.6 հազ.դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում փաստացի հավաքագրած եկամուտները կազմել են 166,356.0 հազ.դրամ, այդ թվում՝ շինությունների գույքահարկը՝ 30,024.8 հազ.դրամ, փոխադրամիջոցների գույքահարկը՝ 25,469.7 հազ,դրամ, հողի հարկը՝ 2,046.9 հազ.դրամ, տեղական տուրքերը՝ 5,922.2 հազ.դրամ, պետ. բյուջեից հատկացվող դոտացիան՝ 72,490.4 հազ. դրամ, այլ եկամուտները՝ 30,402.0 հազ.դրամ:

Բյուջեով նախատեսված բոլոր ծրագրերն իրականացվել են բացառապես համայնքի բյուջեի միջոցների հաշվին:

3.Հասարակական կարգի պահպանության բնագավառ

Այս բնագավառում իրականացվող աշխատանքները ուղղված են պահպանելու հասարակական կարգ ու կանոնը: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում տարբեր բնույթի իրավախախտումներ թույլ տված անձինք ենթարկվել են վարչական պատասխանատվության, որի հետևանքով բյուջե է մուտքագրվել 410.0 հազ.դրամ: Հարկ է նշել նաև, որ համայնքում տեղի չեն ունեցել իրավախախտումների այնպիսի դեպքեր, որի կանխման համար անհրաժեշտ լիներ ոստիկանության միջամտությունը:

4. Պաշտպանության բնագավառ

Մշտական աջակցություն է ցուցաբերվում զորակոչին, զորահավաքներին և ուսումնավարժական հավաքներին:

Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավումը, պատերազմի վետերանների, արցախյան ազատամարտի մասնակիցների, զոհված մարտիկների ընտանիքների, զինծառայությունից արձակվածների սոցիալական խնդիրների լուծումը մշտապես գտնվում է մեր ուշադրության կենտրոնում և իրականացվում է ամենօրյա հետևողական գործունեությամբ:

Մշակվել և մարզային փրկարարական վարչությանն է ներկայացվել համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը:

5.Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

Համայնքում քաղաքաշինական ծրագրերն իրագործվում են գլխավոր հատակագծին համապատասխան:

Համայնքում բնակարանային շինարարության տեմպերը սպասվածից ցածր են, որը պայմանավորված է բնակչության ֆինանսական և տնտեսական խնդիրների առկայությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 40 շինարարության թույլտվություն, 1 քանդման թույլտվություն, սահմանված կարգով ձևակերպվել է 14 ավարտված շինարարության շահագործման փաստագրումը:

Չնայած ինքնակամ շինությունների կառուցման նկատմամբ իրականացվող հսկողությանը, դեռևս դրանց կանխմանն ուղված աշխատանքներում կան բացթողումներ: Հաշվետու ժամանակահատվածում ինքնակամ շինությունների օրինականացման գործառույթներից համայնքի բյուջե է մուտքագրվել 3,142.4 հազ. դրամ:

Իրականացվում է համայնքային սեփականություն հանդիսացող գույքի ամենամյա հաշվառումը և գույքագրումը: Գույքագրման փաստաթղթերը ներկայացվում են ավագանու հաստատմանը:

Բավարար հիմքերի վրա է կոմունալ տնտեսության աշխատանքների կազմակերպումն ու կատարումը: Համայնքի բնակչության կենցաղային աղբի հեռացումը, համայնքի փողոցների, միջհամայնքային ճանապարհաեզրերի, գերեզմանատների մաքրումը, աղբի տեղափոխումը, ամռան ամիսներին ճանապարհների ջրումն ու լվացումը, ձմռան ամիսներին ձյան շերտի հեռացումը իրականացվում է «Ջրվեժի Համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում համայնքի բյուջե մուտքագրված աղբահանության վճարը կազմել է 15,804.2 հազ.դրամ: Համայնքի վարչական տարածքում գործող կազմակերպությունների և տնտեսավարող սուբյեկտների, բնակչության կենցաղային աղբի հեռացման, համայնքի տարածքի սանիտարական մաքրման և աղբահանության ծառայությունների համար բյուջեից հատկացվել է 44,386.2 հազ.դրամ սուբսիդիա: Համայնքի ավագանու կողմից բնակչության կենցաղային աղբի հեռացման վճարը կազմում է ամսական 224,4 դրամ՝ մեկ բնակչի հաշվով: Ավագանու որոշմամբ սահմանվել է աղբահանության վճարի արտոնություն՝ արցախյան ազատամարտում զոհվածների 10 ընտանիքների համար ամբողջությամբ՝ 43 անձ, ինչպես նաև համայնքի յուրաքանչյուր բնակչին՝ ամսական 74,4 դրամի չափով:

6. Հողօգտագործման բնագավառ

Մեծ հետևողականություն է ցուցաբերվում հողերի նպատակային օգտագործմանը, հողերի հաշվառման մատյանի և հերթապահ քարտեզների վարմանը, հողային հաշվեկշռի կազմմանը:

Համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներին, գոտիավորման այլ փաստաթղթերին, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին և հողային օրենսդրության պահանջներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ կազմակերպություններին և քաղաքացիներին վարձակալական հիմունքներով օգտագործման են տրամադրվել 105.25 հա հողամասեր, որից՝ 101.7 հա գյուղատնտեսական նշանակության, 0.40 հա՝ բնակավայրերի, 3.0՝ հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 0.15 հա՝ արդյունաբերության և ըհդերքօգտագործման: Հաշվետու ժամանակահատվածում համայնքի բյուջե է մուքագրվել 5,441.8 հազ.դրամ հողի վարձակալության վճար, 725.8 հազ.դրամ այլ գույքի վարձակալության վճար:

Նախորդ տարվա հաշվետու ժամանակահատվածում հողի օտարումից, հողի նպատակային նշանակության փոփոխումից կադաստրային արժեքների տարբերության՝ համայնքի բյուջե մուտքագրված ֆինանսական միջոցները կազմել են 42,860.6 հազ.դրամ:

7. Տրանսպորտի բնագավառ

Համայնքի տարածքում ճանապարհների վիճակը դեռևս բավարար չէ:

Ներհամայնքային ճանապարհները մեծ մասամբ հողային են, զուրկ ասֆալտ-բետոնե ծածկույթից: 2014 թվականի հաշվետու ժամանակահատվածում ասֆալտապատվել են համայնքի 8-րդ և 12-րդ փողոցները, 2-րդ փողոցի առաջին չափաբաժինը: Ասֆալտապատվել է 5 740 ք.մ ճանապարհ, որի համար կատարված ծախսերը կազմել են 48,771.9 հազ.դրամ: Իրականացվել է նաև ճանապարհների ջրահեռացման առուների կառուցման աշխատանքները: Կառուցվել է 295.7 գծմ ջրահեռացման առուներ, այդ աշխատանքների համար կատարված ծախսերը կազմել են 16,297.5 հազ.դրամ:

Փողոցների ասֆալտապատման ծրագիրը շարունակվում է նաև 2015 թվականին: Կազմակերպվել է գնումների գործընթաց, կապալառու կազմակերպության հետ կնքվել է

պայմանագիր և նախատեսվում է համայնքի ևս չորս փողոցներում իրականացնելու ասֆալտապատման աշխատանքներ՝ կատարելով 64.4 մլն դրամի ներդրում:

8. Առևտրի և սպասարկման բնագավառ

2014 թվականին համայնքում գործել են 21 առևտրի կետեր, 26 հանրային սննդի օբյեկտներ, կենցաղային ծառայության 2 օբյեկտ: 2015 թվականին համայնքում գործում են 24 առևտրի կետեր, 26 հանրային սննդի օբյեկտներ, կենցաղային ծառայության 2 օբյեկտ, 2 զվարճանքի օբյեկտ:

2014 և 2015 թվականների հաշվետու ժամանակահատվածի ընթացքում համայնքի տարածքում տրվել է համապատասխանաբար՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման 43 և 53 թույլտվություն, ժամը 24:00-ից հետո հանրային սննդի, զվարճանքի և վիճակախաղերի կազմակերպման 8 թույլտվություն:

9. Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ

Համայնքի օժանդակությամբ՝ սուբսիդիայի հատկացմամբ գործում է «Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ը, աջակցություն է ցուցաբերվում Ջրվեժի միջնակարգ դպրոցին: Հաշվետու ժամանակահատվածում «Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ին համայնքի բյուջեից հատկացվել է 17,936.0 հազ.դրամ սուբսիդիա, որը հիմնականում ուղղվել է աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի վճարմանը: Ջրվեժի մանկական երաժշտական դպրոց հաճախող սաների ուսման վարձը բոլոր խմբերում համայնքի ավագանու կողմից սահմանվել է 1000 դրամ համայնքի երեխաների համար, 5000 դրամ այլ համայնքների երեխաների համար:

Հաշվետու ժամանակահատվածում Ջրվեժի միջնակարգ դպրոցին հատկացվել է 1000.0 հազ.դրամ կապիտալ դրամաշնորհ՝ տեխնիկական սարքավորումների ձեռքբերման նպատակով, 399.0 հազ.դրամ ընթացիկ դրամաշնորհ այլ սարքավորումների և աթոռների ձեռքբերման նպատակով: Ավանդույթ է դարձել նաև սեպտեմբերի մեկին առաջին դասարանի սաների համար գրենական պարագաների ձեռքբերումը: Նախորդ տարի այդ նպատակի համար ծախսվել են 784.1 հազ.դրամ ֆինանսական միջոցներ, առաջին դասարան են հաճախել 123 սաներ, որոնք ստացել են 24 անուն գրենական պարագաներերով փաթեթներ:

Համայնքն անմասն չի մնում նաև հրատապ այլ խնդիրների լուծմանն աջակցելուց, ինչպիսին է «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործունեությունը, Արցախի հիմնախնդիրների լուծմանն ուղղված վիճակախաղին մասնակցությունը:

Ավանդույթ է դարձել համայնքում մայիսի 9-ի՝ հաղթանակի և խաղաղության օրվան, ամանորին և սուրբ ծնունդին նվիրված միջոցառումների ամենամյա կազմակերպումը, ակտիվ մասնակցությունը հայ առաքելական եկեղեցու տաղավար տոներին և Ջրվեժի Ս.Կաթողիկե եկեղեցու ուխտի օրվան:

2015 թվականին ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրով համայնքը կրկին հյուրընկալեց Հորդանանի Ամմանի հայկական վարժարանի 12-20 տարեկան 15 սաների իրենց կազմակերպչի հետ:

Համայնքում ավանդույթ է ձևավորվել նաև ամառային ճամբարի կազմակերպումը:

10. Առողջապահության բնագավառ

Համայնքում գործող միակ առողջապահական հիմնարկը դա Ջրվեժի բժշկական ամբուլատորիան է, որը իրականացնում է համայնքի բնակչության ընթացիկ բուժ.սպասարկումը, հղիների, նորածինների հաշվառումը: Բժշկական ամբուլատորիայի շենքը ունի ավելի քան քսան տարվա վաղեմություն և վերանորոգման կարիք: Ընթացիկ տարում կազմակերպվել է գնումների գործընթաց շենքի կապիտալ վերանորոգման նպատակով, կապալառու կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր և շինարարական աշխատանքներն արդեն սկսվել են: Այդ նպատակով կիրականացվի մոտ 6,500.0 դրամի ֆինանսական ներդրում:

Բժշկական սպասարկման ասպարեզում համայնքի վարչական դիրքը շահեկան է, քանի որ համայնքի բնակչության բուժ.սպասարկմանը խթանում է նաև «Երևանի Ս.Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոնի» գործունեությունը:

11.Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառ

Համայնքը մեծ պատրաստակամությամբ է օժանդակում սոցիալական օգնության ծառայության գործունեությանը: «Փարոս» համակարգից օգտվում են համայնքի թվով 63 ընտանիքներ:

Սոցիալապես անապահով ընտանիքներին համայնքի բյուջեից ցուցաբերվում է դրամական օգնություն: Հաշվետու ժամանակահատվածում համայնքի բյուջեից վճարվել է 1,690.0 հազ.դրամ սոցիալական նպաստ, այդ թվում՝ 240.0 հազ.դրամ հարազատին կորցրած անձանց, 880.0 հազ.դրամ սոց.օգնություն ընտանիքներին, 570.0 հազ.դրամ՝ սոց.օգնություն հայրենական մեծ պատերազմի մասնակիցներին և արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներին: Նշված խմբերը մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում և նրանց ցուցաբերվող աջակցությունը չի սահմանափակվում ֆինանսական օգնության հատկացմամբ:

12. Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառ

Բնության և շրջակա միջավայրի պահպանության խնդիրը մեզանից յուրաքանչյուրի խնդիրն է: Գյուղապետարանի կողմից կազմակերպվում է համայնքային սեփականություն համարվող հողերի, այլ տարածքների շրջակա միջավայրի պահպանությունը, սակայն այն դեռևս ամբողջ ծավալով դժվար իրականացվող խնդիր է:

Համայնքում իրականացվում է նաև ջրահեռացման համակարգի (կոյուղու) կառուցման աշխատանքներ: Նախորդ տարվա հաշվետու ժամանակահատվածում կառուցվել է 1428 գծմ ջրահեռացման (կոյուղու) համակարգ, համայնքի բյուջեից այս ծրագրի համար ծախսվել են 14,769.8 հազ.դրամ ֆինանսական միջոցներ:

Անցած տարիների համեմատ համայնքում շատ բան է փոխվել, սակայն անելիքներն էլ դեռ շատ են: Ուստի բնակչության հետ համատեղ, միմյանց օգնելով և աջակցելով լուծենք մեր առջև ծառացած խնդիրները, որպեսզի մեր համայնքը դառնա ավելի բարեհաս, ավելի լուսավոր, բարձրանա բնակչության կենսամակարդակը և մարդիկ մեծ հույսով ու հավատով լցվեն վաղվա օրվա և ապագայի հանդեպ: